# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2026 թվականի №2495 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԱԶԱՏ և ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Ազատ և Հայկ եղբայրներ» Սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրեն Աննա Վարդապետյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №15215-2026 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 4 հասցեում գտնվող «Ազատ և Հայկ եղբայրներ» Սահմանափակ պատասխանատվության ընկերությանը պատկանող անշարժ գույքը վերահասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Թբիլիսյան խճուղի, 2-րդ փակուղի, 5 գործարան**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ազատ և Հայկ եղբայրներ» Սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրեն Աննա Վարդապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

eID

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի **2026 թվականի №** 2496 **Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՇԱՐՔ 7/3 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 29.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1719-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 4-րդ շարք 7/3 հասցեի հարևանությամբ գտնվող 29.26 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Յ. Վարդանյան փողոց, 7/2 հողամաս**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2026 **թվականի** N2497 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 13.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 24.63 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (19.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 13.84 (տասերեք ամբողջ ութսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 24.63 (քսանչորս ամբողջ վաթսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (19.62 (տասնինն ամբողջ վաթսուներկու) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և 4-րդ բաժնի 34.2-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026UDZQ8H ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 13.84 (տասերեք ամբողջ ութսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 24.63 (քսանչորս ամբողջ վաթսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (19.62 (տասնինն ամբողջ վաթսուներկու) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի նշանակության կիսակառույց շինություն և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցը իրականացրած քաղաքացի Աղավնի Աշոտի Հարությունյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/ՓՈԽԱՐԻՆՈՂ/**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«31.» օգոստոսի 2026 թվականի N2498 Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱ ԺՈՐԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄՈՒՇ 2 ԹԱՂԱՄԱՍ 3-4 ՇԵՆՔ N39 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԴՌԱՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ 1(ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արա Ժորայի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01112023-08-0035 վկայական) Մուշ 2 թաղամաս 3-4 շենք N39 հասցեի բնակարանում ինքնակամ դռան է ձևափոխված 1(մեկ) պատուհան:

Քաղաքացի Արա Ժորայի Կարապետյանը դիմել է նշված ձևափոխումն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնամ կառույցների օրինականացման և տնօրինման >> կարգի 3-րդ բաժնի, հաշվի առնելով որ կատարված ձևափոխությունը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կատարված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Արա Ժորայի Կարապետյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի փետրվարի 04-ին N 1390 թվագրմամբ )՝

#### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Արա Ժորայի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Մուշ 2 թաղամաս 3-4 շենք N39 հասցեի բնակարանում ինքնակամ դռան ձևափոխված 1(մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 3346 (երեք հազար երեք հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արա Ժորայի Կարապետյան պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись
X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/ՓՈԽԱՐԻՆՈՂ /**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«31» օգոստոսի 2026 թվականի N 2499 Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ 2 ԹԱՂԱՄԱՍԻ 3-4 ՇԵՆՔ 39 ՀԱՍՑԵԻ  ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 3-4 շենք 39 հասցեի բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Արա Ժորայի Կարապետյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 01112025-08-0035 վկայական):

Քաղաքացի Արա Ժորայի Կարապետյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 3-4 շենք 39 հասցեի 46,85 (քառասունվեց ամբողջ ութսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը, որպես ատամնաբուժարան փոփոխելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և քաղաքացի Արա Ժորայի Կարապետյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի փետրվարի 04-ին № 1389 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 3-4 շենք 39 հասցեի 46,85 (քառասունվեց ամբողջ ութսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը, որպես ատամնաբուժարան:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին քաղաքացի Արա Ժորայի Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/ՓՈԽԱՐԻՆՈՂ /**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» օգոստոսի 2026 **թվականի** N 2500Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս. ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ № 91/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 48.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (37.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Արմեն Սամվելի Համբարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական № 21012025-08-0010) Գյումրի քաղաքի Ս. Սպանդարյան փողոց № 91/1 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 48.8 (քառասունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ բացվել է 1 (մեկ) պատուհան և ինքնակամ բացվել է 1(մեկ) դուռ:

Քաղաքացի Արմեն Սամվելի Համբարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ բնակելի շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետով և 18-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026ASZ63A ծածկագիրը, քաղաքացի՝ Արմեն Սամվելի Համբարյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հունիսի 19-ին 9172 թվագրմամբ )՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Արմեն Սամվելի Համբարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ս. Սպանդարյան փողոց № 91/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 48.8 (քառասունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, ինքնակամ բացված 1 (մեկ) պատուհանը և ինքնակամ բացված 1(մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 138430 (մեկ հարյուր երեսունութ հազար չորս հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմեն Սամվելի Համբարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

eID

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
/փոխարինող/

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*«31» օգոստոսի 2026 թվականի N 2501 -Ա*

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՍՄԻԿ ԺՈՐԺԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂՅՈՒՍԻ ՓՈՂՈՑ N50 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 49.91 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 342.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Հասմիկ Ժորժիկի Հարությունյանին պատկանող Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N50 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 49.91 (քառասունինը ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններ (հիմք՝ ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026EPVKMH ծածկագիր) և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 342.6 (երեք հարյուր քառասուներկու ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Հասմիկ Ժորժիկի Հարությունյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Հասմիկ Ժորժիկի Հարությունյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N6582 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացի Հասմիկ Ժորժիկի Հարությունյանին (ծնված 1961 թվականի մայիսի 20-ին) պատկանող Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N50 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 49.91(քառասունինը ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացի Հասմիկ Ժորժիկի Հարությունյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N50 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
3. Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N50 հասցեին կից, սահմանված չափից ավել օգտագործվող 42.6 (քառասուներկու ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Հասմիկ Ժորժիկի Հարությունյանի՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 2888 /երկու հազար ութ հարյուր ութսունութ / Հայաստանի Հանրապետության դրամ 1 /մեկ/ քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 123029 / հարյուր քսաներեք հազար քսանինը/ Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 42.6(քառասուներկու ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առքուվաճառքի պայմանագիր /պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Հասմիկ Ժորժիկի Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**(փոխարինող)**

**2026 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

**«31» օգոստոսի 2026 թվականի N 2502 -Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍՏՅՈՊԱ ԳԵՎՈՐԳԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ (1/2), ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ (1/2) ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱԴՈՅԱՆ ՓՈՂՈՑ N245 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 246.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 29.87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Ստյոպա Գևորգի Գրիգորյանին (1/2), Հրաչյա Գևորգի Գրիգորյանին (1/2) պատկանող Գյումրի քաղաքի Մադոյան փողոց N245 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 246.84 (երկու հարյուր քառասունվեց ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, (որից 3.63(երեք ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 3.2(երեք ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները կառուցված 2001 թվականի մայիսի 15-ից հետո) (հիմք՝ ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026P6BPCH ծածկագիր) և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 29.87(քսանինը ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Ստյոպա Գրիգորյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Ստյոպա Գրիգորյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N6647 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացիներ Ստյոպա Գևորգի Գրիգորյանին (1/2) (ծնված 1952 թվականի դեկտեմբերի 26-ին), Հրաչյա Գևորգի Գրիգորյանին (1/2) (ծնված 1955 թվականի դեկտեմբերի 07-ին) պատկանող Գյումրի քաղաքի Մադոյան փողոց N245 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 246.84 (երկու հարյուր քառասունվեց ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, (որից 3.63(երեք ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 3.2 (երեք ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները կառուցված 2001 թվականի մայիսի 15-ից հետո) ճանաչել օրինական, տաղական բյուջե ենթակա է գանձման 8407(ութ հազար չորս հարյուր յոթ) Հայաստանի Հանրապետության դրամ :
2.Ճանաչել քաղաքացիներ Ստյոպա Գևորգի Գրիգորյանին, Հրաչյա Գևորգի Գրիգորյանին սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Մադոյան փողոց N245 հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող 29.87(քսանինը ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որշումը ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ստյոպա Գևորգի Գրիգորյանին, Հրաչյա Գևորգի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**(փոխարինող)**

**2026 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2026 **թվականի** N 2503-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ 7-ՐԴ ՓՈՂՈՑ № 15/6 ՀԱՍՑԵԻ 525.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Անի թաղամաս 7-րդ փողոց № 15/6 հասցեի 525.85 (հինգ հարյուր քսանհինգ ամբողջ ութսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Անի թաղամաս 7-րդ փողոց № 15/6 հասցեի 525.85 (հինգ հարյուր քսանհինգ ամբողջ ութսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**(ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

«31» օգոստոսի 2026 **թվականի** N 2504 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԳԵՍԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ № 2/9 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 250.55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (229.89 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Գևորգ Վարդգեսի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական № 22112012-08-0282) Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի № 2/9 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 250.55 (երկու հարյուր հիսուն ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություն:

Քաղաքացի Գևորգ Վարդգեսի Ավագյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ բնակելի շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026DQHA9L ծածկագիրը, քաղաքացի՝ Գևորգ Վարդգեսի Ավագյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հուլիսի 10-ին № 12543 թվագրմամբ )՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Գևորգ Վարդգեսի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ֆ. Թբիլիսյան խճուղի № 2/9 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 250.55 (երկու հարյուր հիսուն ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 214082 (երկու հարյուր տասնչորս հազար ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սահմանված կարգով քաղաքացի Գևորգ Վարդգեսի Ավագյանին տրամադրել անավարտ շինությունը ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք, անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Վարդգեսի Ավագյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
/փոխարինող/

**2026թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2026 **թվականի** N 2505 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի № 1725-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի փետրվարի 24-ի «Քաղաքացիներ Ռոբերտ Գրիշայի Գրիգորյանին, Ժաննա Ազատի Մկրտչյանին, Ռայա Տիգրանի Գրիգորյանին, Գրիգոր Ռոբերտի Գրիգորյանին, Օֆելյա Գրիգորի Գրիգորյանին, Լամարա Գրիգորի Գրիգորյանին և Գյուլնարա Ռոբերտի Գրիգորյանին որպես ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի Պետրոսյան փողոց № 32 հասցեով բնակելի ֆոնդի տան պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 116.9 քառակուսի մետր մակերեսով հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 1725-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. «Քաղաքացիներ Ռոբերտ Գրիշայի Գրիգորյանին, Ժաննա Ազատի Մկրտչյանին, Ռայա Տիգրանի Գրիգորյանին, Գրիգոր Ռոբերտի Գրիգորյանին, Օֆելյա Գրիգորի Գրիգորյանին, Լամարա Գրիգորի Գրիգորյանին և Գյուլնարա Ռոբերտի Գրիգորյանին որպես ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի Պետրոսյան փողոց № 32 հասցեով բնակելի ֆոնդի տան պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 116.9 քառակուսի մետր մակերեսով հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 1725-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Վերնագրում, նախաբանում և որոշման 1-ին կետում «Պետրոսյան փողոց № 32» բառերը և թիվը փոխարինել «Պետրոսյան փողոց № 34» բառերով և թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ՓՈԽԱՐԻՆՈՂ)

2026թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2026 **թվականի** N 2506 -Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԵՂԻՇ ՍԱՄՎԵԼԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎԱԾ «ԳԱԶ 3309» KO-440-2 ՄԱԿՆԻՇԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 129-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի օգոստոսի 25-ի ժամը $11^{00}$-ից մինչև օգոստոսի 28-ի ժամը $11^{00}$-ն կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող «ԳԱԶ 3309» KO-440-2 մակնիշի (նույնականացման համար՝ XVL483213C0002762) տրանսպորտային միջոցի էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ):

Քաղաքացի Եղիշ Սամվելի Թովմասյանը մասնակցելով նշված տրանսպորտային միջոցի աճուրդին, վճարելով աճուրդում առաջարկված առավելագույն գինը՝ 244000 (երկու հարյուր քառասունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ճանաչվել է աճուրդում հաղթող (2026 թվականի օգոստոսի 28-ի արձանագրություն):

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 15-ի N 129-Ա որոշումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող «ԳԱԶ 3309» KO-440-2 մակնիշի (նույնականացման համար՝ XVL483213C0002762) տրանսպորտային միջոցը հանձնել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված Եղիշ Սամվելի Թովմասյանին՝ սեփականության իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերով:

1. Տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման, պետական հաշվառման և դրա հետ կապված այլ ծախսերը կատարել քաղաքացի Եղիշ Սամվելի Թովմասյանի միջոցների հաշվին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Եղիշ Սամվելի Թովմասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

**2026 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«31» օգոստոսի 2026 **թվականի** N 2507-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ N 7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1855-Ն որոշման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի թաղամասի 9-րդ փողոց N 7 հասցեի բնակելի շենքի զբաղեցրած 0,21752 (զրո ամբողջ քսանմեկ հազար յոթ հարյուր հիսուներկու հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը տրամադրել շենքի պահպանման և սպասարկման համար, համաձայն կից տրվող հողամասի հատակագծի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

2026-08-31 09:25:47 GMT+4
Հավաստված է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ
eID

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**( ՓՈԽԱՐԻՆՈՂ )**

**2026 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

<<31>> օգոստոսի 2026 թվականի N 2508 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԱՆՈՒԼԻԿ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻԱՆԱ ԳԵՎՈՐԳԻ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Մարիանա Գևորգի Ղարաքեշիշյանի 2026 թվականի օգոստոսի 28-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Անուլիկ –մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարիանա Գևորգի Ղարաքեշիշյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 15 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից 22-ը ներառյալ:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Մարիանա Գևորգի Ղարաքեշիշյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության մեթոդիստ Նարիա Սեյրանի Դանիելյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիանա Գևորգի Ղարաքեշիշյանին և Նարիա Սեյրանի Դանիելյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-31 18:00:06 GMT+4
Հաստատված է էԱՍ-ի կողմից

eID

Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
/փոխարինող/

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<< 01 >> սեպտեմբերի 2026 թվականի N 2509-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼԻԼԻԹ ԱՐԱԳԱԾԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ԵՎ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, ցանկի 16-րդ կետով, 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Լիլիթ Արագածի Թովմասյանի 2026 թվականի օգոստոսի 24-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագածի Թովմասյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա լրացուցիչ արձակուրդը և չվճարվող արձակուրդ՝ 2026 թվականի սեպտեմբերի 14-ից:

**2.** Ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 4 աշխատանքային օր և չվճարվող արձակուրդը՝ 1 օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 14-ից 18-ը ներառյալ:

**3.** Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Լիլիթ Արագածի Թովմասյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալ Էդգար Գագիկի Մարտիրոսյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Արագածի Թովմասյանին և Էդգար Գագիկի Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

eID

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**փոխարինող**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» սեպտեմբերի 2026 թվականի N 2510-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՏԱՇԵՍ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ և ՀԱՅԿՈՒՀԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ № 26 ՀԱՍՑԵԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՆԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 14,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանին և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Թամանյան փողոց N 26 հասցեում գտնվող շինության (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 20122021-08-0065) օրինական հողամասին կից առկա է 26,26 (քսանվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քմ մակերեսով կարգավիճակը չորոշված հողամաս, որը փաստացի օգտագործվում է նշված գույքի սեփականատերերի կողմից: Նշված հողամասի փաստացի օգտագործումը պայմանավորված է նախկինում թույլ տրված թվաբանական սխալի հետևանքով ձևավորված մակերեսային անհամապատասխանությամբ:

Քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանի և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանի լիազորված անձ Արթուր Ստեփանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով որակավորման վկայական ունեցող անձի կողմից ներկայացված չափագրական նյութերը և քաղաքացիներ՝ Արտաշես Ռուբենի Սարգսյանի և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանի լիազորված անձ Արթուր Ստեփանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի օգոստոսի 05-ին № 13886 թվագրմամբ )՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել և վերականգնել քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանին (ծնված 1949 թվականի փետրվարի 20-ին) և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանին (ծնված 1952 թվականի մարտի 13-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Թամանյան փողոց № 26 հասցեի շինության կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող կարգավիճակը չորոշված 26,26 (քսանվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Արտաշես Ռուբենի Սարգսյանի և Հայկուհի Անդրանիկի Սարգսյանի լիազորված անձ Արթուր Ստեփանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«01» սեպտեմբերի 2026 թվականի № 2511 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂՅՈՒՍԻ ՓՈՂՈՑ 136 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №14012026-08-0012) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ռաֆիկ Փանոսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14929-2026 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «ԼԻԼԱՐՄԻՆ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինությունների բաժանման սխեմաները՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց 136 հասցեում գտնվող անշարժ գույքը (վկայական №14012026-08-0012) երկու մասերի բաժանելու նպատակով առանձնացված հատվածներին տրամադրել հասցեներ.

1) Հողամասի և շինությունների բաժանման սխեմաներով առանձնացված առաջին հատվածը հասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Աղյուսի փողոց, 136 բնակելի տուն**

2) Հողամասի և շինությունների բաժանման սխեմաներով առանձնացված երկրորդ հատվածը հասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Աղյուսի փողոց, 3-րդ նրբանցքի 1-ին փակուղի, 11 բնակելի տուն**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռաֆիկ Փանոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

eID

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«01» սեպտեմբերի 2026 թվականի № 2512Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 69 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №20052026-08-0022) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Կոլյա Սարգսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14277-2026 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, բաժանման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Մյասնիկյան փողոց 69 հասցեում գտնվող անշարժ գույքը (վկայական №20052026-08-0022) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) Հողամասի բաժանման սխեմայով առանձնացված առաջին հատվածը հասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ա. Մյասնիկյան փողոց, 69 բնակելի տուն**

2) Հողամասի բաժանման սխեմայով առանձնացված երկրորդ հատվածը հասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ա. Մյասնիկյան փողոց, 69/2 հողամաս**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կոլյա Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-09-01 12:08:26 GMT+4
eID

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«01» սեպտեմբերի 2026 թվականի №2513 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1993 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 21 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՅԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հատակագիծը ու քաղաքացի Արայիկ Գևորգյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14635-2026 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների Գյումրիի քաղաքային գործադիր կոմիտեի 1993 թվականի հուլիսի 22-ի որոշման թիվ 21 արձանագրության համաձայն քաղաքացի Արայիկ Գևորգյանին հատկացված հողամասին տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Դ. Վարուժանի փողոց, 1-ին նրբանցք, 14/2 հողամաս**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Օֆիկ Դանիելյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-09-01 10:17:57 GMT+4
Հաստատված է ԷՑՓՆԳ-ի կողմից

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» սեպտեմբերի 2026 թվականի N2514 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 270,2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 187,4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (156,10 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 270,2 (երկու հարյուր յոթանասուն ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 187.4 (մեկ հարյուր ութսունյոթ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին (156,10(մեկ հարյուր հիսունվեց ամբողջ տաս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026JN3CLH ծածկագիրը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Գյումրի քաղաքի Շիրակացի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 270,2 (երկու հարյուր յոթանասուն ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 187.4 (մեկ հարյուր ութսունյոթ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին (156,10(մեկ հարյուր հիսունվեց ամբողջ տաս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սասուն Սերյոժայի Թամազյանին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ**

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

**«01» սեպտեմբերի 2026 թվականի N 2515 Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԺԴԵՀԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 23,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 23,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 19,4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի հրապարակի հարևանությամբ 23,3 (քսաներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ն ինքնակամ կառուցվել է 23,3 (քսաներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր արտաքին 19,4 (տասնինը ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Լյովա Գուրգենի Ավետիսյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 2026BKQ66V տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի հրապարակի հարևանությամբ 23,3 (քսաներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ն ինքնակամ կառուցվել է 23,3 (քսաներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր արտաքին, 19,4 (տասնինը ամբողջ չորս տասնորդական) ներքին մակերեսով մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Լյովա Գուրգենի Ավետիսյանը:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լյովա Գուրգենի Ավետիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/ՓՈԽԱՐԻՆՈՂ/**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«01» սեպտեմբերի 2026 ԹՎԱԿԱՆԻ N 2516-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ 8/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԻ ՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ալեք Մանուկյան փողոց 8/1 հասցեի բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գագիկ Իլիչի Մալխասյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 18032026-08-0003 վկայական):

Քաղաքացի Գագիկ Իլիչի Մալխասյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ալեք Մանուկյան փողոց 8/1 հասցեի բնակելի տան մի մասի՝ 66,81 (վաթսունվեց ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր, 11,65 (տասնմեկ ամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր և 2,35 (երկու ամբողջ երեսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսներով սենքերի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը որպես առևտրի և սպասարկման օբյեկտ փոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Գագիկ Իլիչի Մալխասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի օգոստոսի 17-ին № 14660 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Ալեք Մանուկյան փողոց 8/1 հասցեի բնակելի տան մի մասի՝ 66,81 (վաթսունվեց ամբողջ ութսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր, 11,65 (տասնմեկ ամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր և 2,35 (երկու ամբողջ երեսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսներով սենքերի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը որպես առևտրի և սպասարկման օբյեկտ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Գագիկ Իլիչի Մալխասյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

eID

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
/ՓՈԽԱՐԻՆՈՂ/

2026 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«01» սեպտեմբերի 2026 **թվականի** N2517-Ա

**2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ ՏՐՎԱԾ N ՇԹ/926/26736-26 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գրիշա Ղարիբյանին Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի N49/1 հասցեով բնակելի տան վերակառուցման շինարարական աշխատանքների կատարման համար 2026 թվականի ապրիլի 28-ին տրվել է NՇԹ/926/26736-26 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով Գրիշա Ղարիբյանի դիմումը(մուտքագրված համայնքապետարանում 21.08.2026թ. N14788) և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. 2026 թվականի ապրիլի 28-ին տրված NՇԹ/926/26736-26 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գրիշա Ղարիբյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

2026-09-01 17:45:32 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆՑ-ի կողմից

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**/ ՓՈԽԱՐԻՆՈՂ/**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**<<01>> սեպտեմբերի 2026 թվականի N 2518 -Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՄԱՐԻՆԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Մարինե Գուրգենի Գևորգյանի 2026 թվականի օգոստոսի 31-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Շախմատի մանկապատանեկան մարզադպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մարինե Գուրգենի Գևորգյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի սեպտեմբերի 22-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 12 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 5-ը ներառյալ:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Մարինե Գուրգենի Գևորգյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության գլխավոր մասնագետ Վահե Նորիկի Թորոսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարինե Գուրգենի Գևորգյանին և Վահե Նորիկի Թորոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

eID

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<02>> սեպտեմբերի 2026 թվականի N 2619 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԷՅԼԻԹԻԱ -ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԼԻԹ ԱՐՏՈՒՇԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599 որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Լիլիթ Արտուշի Համբարձումյանի 2026 թվականի սեպտեմբերի 1-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Էյլիթիա-մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիթ Արտուշի Համբարձումյանին տրամադրել 2026 -2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի սեպտեմբերի 3-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 7 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 3-ից 11-ը ներառյալ:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Լիլիթ Արտուշի Համբարձումյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության մեթոդիստ Հռիփսիմե Մամիկոնի Հունանյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Արտուշի Համբարձումյանին և Հռիփսիմե Մամիկոնի Հունանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

eID

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**փոխարինող**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» սեպտեմբերի 2026 **թվականի** N 2520 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱԻԴԱ ՌԱՖԻԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ № 56 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 41.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 44.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Աիդա Ռաֆիկի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ տրված 2023 թվականի սեպտեմբերի 07-ին N 6103 և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրված 2021 թվականի հոկտեմբերի 10-ին N 7141) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոց № 56 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 44.2 (տասնինն ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է բնակելի շինություններ և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 41.02 (քառասունմեկ ամբողջ երկու հարյուրերոդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Աիդա Մնացականյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023PJACYG ծածկագիրը և քաղաքացի Աիդա Մնացականյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի սեպտեմբերի 01-ին № 12905 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի ներ Աիդա Ռաֆիկի Մնացականյանի (ծնված 1992 թվականի հունվարի 24-ին) սեփականության իրավունքը Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոց № 56 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 44.2 (քառասունչորս՝ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Քաղաքացի Աիդա Ռաֆիկի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոց № 56 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 41.02 (քառասունմեկ ամբողջ երկու հարյուրերոդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աիդա Ռաֆիկի Մնացականյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**(ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

**2026թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«02» սեպտեմբերի 2026 թվականի N 2521 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՅԻ ՓՈՂՈՑ N 14 ՇԵՆՔՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 62,14 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գայի փողոց N 14 հասցեի շենքում գտնվող 62,14 (վաթսուներկու ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական նշանակության տարածքը հանդիսանում է Գյումրի քաղաքի սեփականությունը, որի նկատմամբ իրավունքի պետական գրանցում չի կատարվել:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 և 2006 թվականի հունիսի 16-ի N 1089-Ն որոշումները, հասարակական նշանակության տարածքը պետական գրանցման ենթարկելու նպատակով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Գայի փողոց N 14 շենքում գտնվող 62,14 (վաթսուներկու ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական նշանակության տարածքը ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ՓՈԽԱՐԻՆՈՂ)

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«02» սեպտեմբերի 2026 **թվականի** N 2522-Ա

## 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ ՏՐՎԱԾ N ՇԹ/926/22787-26 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անուշ, Հասմիկ, Հեղուշ, Արտյոմ,Հեղուշ Աղաբաբյաններին Գյումրի քաղաքի Մ.Խորենացու փողոց N12/2 հասցեով բնակելի տան վերակառուցման շինարարական աշխատանքների կատարման համար 2026 թվականի փետրվարի 23-ին տրվել է NՇԹ/926/22787-26 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով Անուշ Աղաբաբյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 13.08.2026թ. N14457) և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. 2026 թվականի փետրվարի 23-ին տրված NՇԹ/926/22787-26 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Անուշ, Հասմիկ, Հեղուշ, Արտյոմ, Հեղուշ Աղաբաբյաններին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

2026-09-02 11:27:51 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«02» սեպտեմբերի 2026 **թվականի** N 2523-Ա

## 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ՏՐՎԱԾ N ՇԹ/926/20168-25 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նարեկ Խաչատրյանին Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղի N11/5 հասցեի բնակելի մասով առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար 2025 թվականի դեկտեմբերի 29-ին տրվել է NՇԹ/926/20168-25 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով Նարեկ Խաչատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 14.08.2026թ. N14583) և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. 2025 թվականի դեկտեմբերի 29-ին տրված NՇԹ/926/20168-25 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Նարեկ Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

2026-09-02 11:05:54 GMT+4

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«02» սեպտեմբերի 2026 **թվականի** N 2524 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի № 2148-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ներսես Շնորհալի փողոցի № 10/3 հասցեի 7.8 քառակուսի մետր մակերեսով հողամասը աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» № 2148-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ներսես Շնորհալի փողոցի № 10/3 հասցեի 7.8 քառակուսի մետր մակերեսով հողամասը աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» № 2148-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Նախաբանի 3-րդ պարբերությունում «սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ներսես Շնորհալի փողոցի N 10 շենք N 7 բնակարանին կից Ներսես Շնորհալի փողոցի N 10/3 հասցեի 7,8 (յոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով» բառերը և թվերը փոխարինել «ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Գայանե Մերուժանի Պոտոսյանին և Արտակ Ալբերտի Ջաքարյանին պատկանող Գյումրի քաղաքի Ներսես Շնորհալի փողոցի N 10 շենք N 7 բնակարանին կից Ներսես Շնորհալի փողոցի N 10/3 հասցեի 7,8 (յոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրելու խնդրանքով» բառերով և թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գայանե Մերուժանի Պոտոսյանին և Արտակ Ալբերտի Ջաքարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-09-02 11:49:58 GMT+4
Համայնքի ղեկավարի տեղակալ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

«02» սեպտեմբերի 2026 թվականի N 2525 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 3198-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 37-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Եղիշե Գրիգորի Վարդանյանի 2026 թվականի սեպտեմբերի 1-ի դիմումը ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին (համայնքապետարանում մուտքագրված թիվ 15585 թվագրությամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Խնամակալություն սահմանելու և քաղաքացի Եղիշե Գրիգորի Վարդանյանին իր անչափահաս թոռան՝ Ինեսա Արթուրի Վարդանյանի նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ» թիվ 3198-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Եղիշե Գրիգորի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: MANUKYAN GAGIK 1414530242

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/ՓՈԽԱՐԻՆՈՂ/**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«02» սեպտեմբերի 2026 թվականի №2526 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ 5/12 (ՎԿԱՅԱԿԱՆ №08072024-08-0004) ԵՎ Ե. ՔՈՉԱՐԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 5/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №20082026-08-0029) ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով «ՊԻՈՆԵՐ ՌԵԶՈՐՏ» Սահմանափակ պատասխանատվության ընկերության գործադիր ղեկավար Աննա Մելքոնյանի լիազորված անձ Մկրտիչ Մելքոնյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված № 14979-2026 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 1-ին թաղամաս 5/12 (վկայական №08072024-08-0004) և Ե. Քոչարի փողոց 4-րդ նրբանցք 5/1 (վկայական №20082026-08-0029) հասցեներում գտնվող հողամասերի միավորումից առաջացող անշարժ գույքը հասցեավորել՝ **Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ե. Քոչարի փողոց, 4-րդ նրբանցք, 5 հողամաս**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի «ՊԻՈՆԵՐ ՌԵԶՈՐՏ» Սահմանափակ պատասխանատվության ընկերության գործադիր ղեկավար Աննա Մելքոնյանի լիազորված անձ Մկրտիչ Մելքոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-09-02 14:07:19 GMT+4
Հավաստագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«02» սեպտեմբերի **2026 թվականի №** 2524Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 150.05 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0527-0053-ԻՑ) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1676-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրվանզադեի փողոցի հարևանությամբ գտնվող 150.05 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0527-0053-ից) տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ա. Շիրվանզադեի փողոց, 1/1 հողամաս**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2026-09-02 [illegible] GMT+4
Հավաստված է [illegible] կողմից

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«02» սեպտեմբերի 2026 թվականի N 2528 Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ, 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ, 4 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ 892,77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կարսի խճուղի 4-րդ փակուղի 4 հողամաս հասցեի 420,1 (չորս հարյուր քսան ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում: Կարիք է առաջացել հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու :

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Կարսի խճուղի 4-րդ փակուղի 4 հողամաս հասցեի 420,1 (չորս հարյուր քսան ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստան Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«02» սեպտեմբերի 2026 **թվականի** N 2529 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԻՆԵ ՌԱԶՄԻԿԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ (ԿՐՈՒՊՍԿԱՅԱ) ՓՈՂՈՑ № 90 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 27.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (20,79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Կարինե Ռազմիկի Զաքարյանին պատկանող Գյումրի քաղաքի Խ. Դաշտենց (Կրուպսկայա) փողոց № 90 հասցեի տան օրինական հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 27.1 (քսանյոթ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Կարինե Ռազմիկի Զաքարյանի լիազորված անձ Համլիկ Ստեփանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետի և 18-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026SFDQRP ծածկագիրը և քաղաքացի Կարինե Ռազմիկի Զաքարյանի լիազորված անձ Համլիկ Ստեփանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հուլիսի 14-ին № 12703 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Կարինե Ռազմիկի Զաքարյանին պատկանող Գյումրի քաղաքի Խ. Դաշտենց (Կրուպսկայա) փողոց № 90 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 27.1 (քսանյոթ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 73847 (յոթանասուներեք հազար ութ հարյուր քառասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարինե Ռազմիկի Զաքարյանի լիազորված անձ Համլիկ Ստեփանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**(ՓՈԽԱՐԻՆՈՂ)**

2026թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«02» սեպտեմբերի 2026 թվականի N 2530 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 2445-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 25-ի N 2445-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել :

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, **որոշում եմ՝.**

1. 2026 թավականի օգոստոսի 25-ի «Քաղաքացի Աշոտ Արձունի Ռեվազյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լազոյի փողոցի N 41 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 89,64 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1 դուռը օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 99.67 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N 2445-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Որոշման 1-ին, կետում «68479(վաթսունութ հազար չորս հարյուր յոթանասունինը)»թվերը և բառերը փոխարինել «2316 (երկու հազար երեք հարյուր տասնվեց)» թվերով և բառերով.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Արձունի Ռեվազյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ**

Восстановимая подпись

X

Подписано: MANUKYAN GAGIK 1414530242 **Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀՎՀՀ 05511159

**2026թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» սեպտեմբերի 2026 **թվականի** N 2531 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ ԹԱՂԱՄԱՍ N 118 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 162. ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (130.44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ 545.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԻԴԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կազաչի պոստ թաղամաս N 118 հասցեի 545.6(հինգ հարյուր քառասունհինգ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12122025-08-0063 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 10-ի N 22-Ա և 2026 թվականի հուլիսի 15-ի N 126-Ա որոշումները, քաղաքացի՝ Աիդա Հարությունի Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի սեպտեմբերի 15-ին N 19487 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Կազաչի պոստ թաղամաս N 118 հասցեի 162.(մեկ հարյուր վաթսուներկու ամբողջ) քառակուսի մետր արտաքին (130.44(մեկ հարյուր երեսուն ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 813078 (ութ հարյուր տասներեք հազար յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Աիդա Հարությունի Հովհաննիսյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կազաչի պոստ թաղամաս N 118 հասցեի 545.6(հինգ հարյուր քառասունհինգ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1575692 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար վեց հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Աիդա Հարությունի Հովհաննիսյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Աիդա Հարությունի Հովհաննիսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աիդա Հարությունի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Աիդա Հարությունի Հովհաննիսյանի միջոցների հաշվին:

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
/փոխարինող/

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<< 03 >> սեպտեմբերի 2026 թվականի N 2532 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԼԻԱՆԱ - ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԵԴԱ ԱԼԻԿԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Սեդա Ալիկի Դարբինյանի 2026 թվականի սեպտեմբերի 2-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Լիանա – մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սեդա Ալիկի Դարբինյանին տրամադրել 2026-2027 թվականիների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի սեպտեմբերի 7-ից:

**2.** Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 15 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 7-ից 28-ը ներառյալ:

**3.** Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Սեդա Ալիկի Դարբինյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության մեթոդիստ Տաթևիկ Ռաֆիկի Սարգսյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սեդա Ալիկի Դարբինյանին և Տաթևիկ Ռաֆիկի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

eID

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«03» սեպտեմբերի 2026 թվականի N 2533 -Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N126/005 ՀԱՍՑԵԻ 408.88 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 123.46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (98.71 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղարիբջանյան խճուղի N125/005 հասցեի 408.88 (չորս հարյուր ութ ամբողջ ութսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 123.46 (հարյուր քսաներեք ամբողջ քառասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (98.71(իննսունութ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Իշխան Կարապետյանը:

Նկատի ունենալով, որ շինությունների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026FMXCU3 ծածկագիրը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Ղարիբջանյան խճուղի N125/005 հասցեի 408.88 (չորս հարյուր ութ ամբողջ ութսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 123.46 (հարյուր քսաներեք ամբողջ քառասունվեց հարյուրերրորդական)քառակուսի մետր արտաքին (98.71(իննսունութ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Իշխան Կարապետյանին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Իշխան Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-09-03 14:19:42 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
(փոխարինող)

**2026 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» սեպտեմբերի 2026 թվականի N 2534 Ա

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆԻ(1/2 ՄԱՍ) ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ(1/2 ՄԱՍ) ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ № 15 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 136.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 26.11 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Արամ Ստեփանի(1/2 մաս) և Հարություն Վլադիմիրի(1/2 մաս) Հակոբյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր № 2627,2628 տրված 2024 թվականի ապրիլի 25-ին) Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց № 15 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 26.11 (քսանվեց ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 136.24(մեկ հարյուր երեսունվեց ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և ինքնակամ բացվել է 1 (մեկ) պատուհան:

Քաղաքացի Արամ Ստեփանի Հակոբյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի և 18-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026UNKP8F ծածկագիրը և հաշվի առնելով քաղաքացի՝ Արամ Ստեփանի Հակոբյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի նոյեմբերի 11-ին № 17350 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Արամ Ստեփանի(1/2 մաս) և Հարություն Վլադիմիրի(1/2 մաս) Հակոբյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց № 15 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 136.24(մեկ հարյուր երեսունվեց ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1 (մեկ) պատուհանը

ճանաչել  օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 2725(երկու հազար յոթ հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Ճանաչել քաղաքացիներ Արամ Ստեփանի(1/2 մաս)(ծնված 1958 թվականի մարտի 10-ին) և Հարություն Վլադիմիրի(1/2 մաս)(ծնված 1962 թվականի հոկտեմբերի 28-ին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց № 15 հասցեի տան  կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 26.11 (քսանվեց ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով  հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Ստեփանի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2026-09-0[illegible] GMT+4
Հավաստված է [illegible] կողմից

eID

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

/փոխարինող/

**2026թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2026 **թվականի** N 2535 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի № ՀՇԹ/926/1662-2026 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ին 2026 թվականի մայիսի 22-ին տրվել է № ՀՇԹ/926/1662-2026 շինարարության թույլտվություն Գյումրի քաղաքի Մ-907 Տե-6590-Տե-6598 10 կՎ մալուխի փոխարինման աշխատանքներ կատարելու համար:
Մ-907 Տե-6590-Տե-6598 10 կՎ մալուխի փոխարինման աշխատանքների ժամանակ պարզվել է, որ տվյալ հետագիծ-նախագծի մեջ ներառում է նաև այլ անձի սեփականության իրավունքով պատկանող հողամաս(հիմք՝ ըստ Գյումրու համայնքապետարանի կողմից կատարված լրացուցիչ ուսումնասիրությունը և ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մուշի բաժնի N 7112-2298 գրությունը):
Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի № 91 որոշման 22-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Կասեցնել «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ին տրված Գյումրի քաղաքի Մ-907 Տե-6590-Տե-6598 10 կՎ մալուխի փոխարինման աշխատանքներ կատարելու 2026 թվականի ապրիլի 9-ի № մայիսի 22-ին տրվել է № ՀՇԹ/926/1662-2026 շինարարության թույլտվությունը՝ մինչև կասեցման պատճառների վերացումը:
2.Շինարարական աշխատանքները վերսկսել Գյումրի համայնքի ղեկավարի շինարարության թույլտվության գործողությունը վերսկսելու մասին որոշում ստանալուց հետո:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
/փոխարինող/

2026-09-04 10:15:56 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID

**2026թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<04>> սեպտեմբերի 2026 թվականի N 2536-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԱԼԱՏ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԻԼԻԹ ՎԱՉԱԳԱՆԻ ՄԱԿԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Լիլիթ Վաչագանի Մակարյանի 2026 թվականի սեպտեմբերի 2-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Երիտասարդական պալատ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Վաչագանի Մակարյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2026 թվականի սեպտեմբերի 9-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 15 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 9-ից 30–ը ներառյալ:
3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Լիլիթ Վաչագանի Մակարյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության երիտասարդական աշխատող Մարիամ Ոսկանի Սուքիկյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Վաչագանի Մակարյանին և Մարիամ Ոսկանի Սուքիկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
փոխարինող

2026-09-04 11:36:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

eID

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**«04» սեպտեմբերի 2026 թվականի N 2537-Ա**

## ՌՈԲԵՐՏ ԺԻՐԱՅՐԻ ԷՄՄԻՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով բացառիկ մարզական նվաճումները, հայկական աթլետիկայի զարգացման և հանրահռչակման գործում ունեցած վաստակը, Գյումրի քաղաքի հեղինակության բարձրացման և քաղաքը միջազգային մարզական ասպարեզում արժանապատվորեն ներկայացնելու, մարզական ավանդույթների պահպանման ու նոր սերնդի մարզիկների ոգեշնչմանը միտված երկարամյա գործունեությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության 18-րդ կետի 10-րդ ենթակետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ռոբերտ Ժիրայրի Էմմիյանին պարգևատրել Գյումրի համայնքի ոսկե հուշամեդալով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռոբերտ Ժիրայրի Էմմիյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**փոխարինող**

**2026 թ.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**«04» «սեպտեմբերի» 2026 թվական N 2538-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի «ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 39 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Կլարա Կարլոսի Ավետիսյանը (անձնագիր՝, AU0308737 տրված՝ 11.06.2021 թ.-ին 016-ի կողմից), Հայաստանի Հանրապետության Գյումրիի քաղաքապետի 1997 թվականի հունվարի 23-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 39 որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման 213-րդ կետի 1-ին ենթակետում Ավետիսյան Կլարա Կառլենի հայրանվան մեջ «Կարլոսի»–ի փոխարեն գրվել է «Կառլեն» (հիմք՝ անձնագիր՝ AU0308737 տրված՝ 11.06.2021 թ. 016-ի կողմից, ծննդյան վկայական 3Ж № 872691,տրված՝ 1956 թվականի հունվարի 27-ին):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Կլարա Կարլոսի Ավետիսյանի 2026 թվական օգոստոսի 25-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ 15185 թվագրությամբ)՝ **որոշում եմ՝**

1. ՀՀ Գյումրիի քաղաքապետի 1997 թվականի հունվարի 23-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 39 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) 213-րդ կետի 1-ին ենթակետում «Կառլենի» բառը փոխարինել «Կարլոսի» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կլարա Կարլոսի Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

eID

**Գ.Մանուկյան**
**/փոխարինող/**

2026 թվական, ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2026 թվականի №2539 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 48 ԵՎ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 48/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Առուշանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №15097-2026 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի 26 Կոմիսարների փողոց 48 և 26 Կոմիսարների փողոց 48/1 հասցեներում գտնվող բնակելի տների միավորումից առաջացող անշարժ գույքը հասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, 26 Կոմիսարների փողոց, 48 բնակելի տուն**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անահիտ Առուշանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-09-04 09:37:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ /փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2026 **թվականի** N 2540-Ա

## 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ ՏՐՎԱԾ N ՇԹ/926/28453-26 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համմիկ Հայկյանին Գյումրի քաղաքի Մուշ 2 թղմ. 9-րդ փողոց 8 շենք, 13 հասցեով բնակարանի վերակառուցման շինարարական աշխատանքների կատարման համար 2026 թվականի մայիսի 21-ին տրվել է NՇԹ/926/28453-26 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով Համմիկ Հայկյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 18.08.2026թ. N14790) և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. 2026 թվականի մայիսի 21-ին տրված NՇԹ/926/28453-26 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Համմիկ Հայկյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**/փոխարինող/**

2026-09-04 15:55:02 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

eID

**2026թ. ք.Գյումրի**